

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ  
ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԾՐԱԳԻՐ  
ՎԱՐԿՆ 8390-AM

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	7
Հատկացված միջոցների օգտագործումն ըստ Ծրագրի գործունեության տեսակների	11
Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12



Փի-Էյջ-Փի Փարթնըրզ ՓԲԸ  
PHP Partners CJSC

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 15ա  
Registration address: 15a Alek Manukyan, Yerevan  
Գործունեության հասցե՝ ՀՀ, Երևան, Ադոնցի 2, Երազ Բիզնես կենտրոն  
Activity address: 2 Adonts str., Yeraz Business Centre, Yerevan, Armenia

Հեռ. (+374)10204090  
Էլ-փոստ general@php.am  
E-mail

## ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վարչապետի Աշխատակազմին

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել ՀՀ Վարչապետի Աշխատակազմի կողմից իրականացվող Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, Միջոցների օգտագործման մասին հաշվետվությունն ըստ Ծրագրի գործունեության տեսակների, Վճարումների դիմումների համադրման հաշվետվությունը, Հատուկ հաշվի հաշվետվությունը և ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվի հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն առ 31 դեկտեմբերի 2020թ.և այլ բացատրական նյութեր:

Մեր կարծիքով կից հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և դրանց օգտագործումը, միջոցների օգտագործումն ըստ Ծրագրի գործունեության տեսակների և դրամական միջոցների հոսքերը՝ *Ֆինանսական հաշվետվողականությունն ըստ հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի* Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ) և Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2014 թվականի օգոստոսի 6-ին կնքած ֆինանսավորման համաձայնագրի (Վարկ N 8390-AM) համապատասխան:

*Կարծիքի հիմք*

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտների համաձայն մեր պատասխանատվությունը ներկայացվում է ստորև՝ մեր Հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը հարուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում: Մենք հանդիսանում ենք ՀՀ Վարչապետի Աշխատակազմից անկախ աուդիտորներ՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի (ՀԷՄՍԽ կանոնագիրը) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնագրի: Մենք կարծում ենք, որ մեր կողմից հավաքագրված աուդիտորական ապացույցները բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

*Հանգամանքները լուսաբանող պարագրաֆ.օգտագործման և բաշխման սահմանափակում*

Մենք ուշադրություն ենք հրավիրում հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 2(ա)-ի վրա, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են ՀՀ կառավարությանը և Միջազգային Զարգացման Ասոցիացիային տեղեկատվություն տրամադրելու նպատակով՝ օժանդակելու նրանց գնահատել Ծրագրի իրականացումը: Արդյունքում, հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող տեղին լինել մեկ այլ նպատակի համար: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հարցի առումով:

*Առանցքային աուդիտորական հարցեր*

Առանցքային աուդիտորական հարցերն այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության, ընթացիկ ժամանակաշրջանի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար ամենանշանակալիցն էին: Այդ հարցերը քննարկվել են հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների՝ որպես ամբողջություն, մեր կողմից իրականացրած աուդիտի համատեքստում, և դրանց վերաբերյալ կարծիք արտահայտելիս՝ այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք ներկայացնում: Ի լրումն «Հայաստանի Պետական Հեղափոխությունների Ֆոնդ»-ին վճարման ենթակա դրամաշնորհային միջոցների պարբերությունում նկարագրված խնդիրների, ստորև նկարագրված են հարցեր, որոնք, ըստ մեր որոշման, համարվում են առանցքային աուդիտորական հարցեր և պետք է ներկայացվեն մեր հաշվետվությունում:

- Արդյունքի վրա հիմնված ֆինանսավորում

«Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ընկերությունն ընտրվել է որպես անկախ աուդիտոր՝ համաձայնեցված ընթացակարգերի շրջանակներում հաստատելու փաստացի իրականացրած ԹԾԾ-ների վավարեկանությունը/թույլատրելիությունը: ԹԾԾ-ների համապատասխանության հաստատումն իրականացվել է 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները դիտարկելու արդյունքում: Գումարը, որն աուդիտորի կողմից հավաստիացվել է որպես թույլատրված/վավերական կազմում է 2,238,921 ԱՄՆ դոլար:

Այս ոլորտում մեր կողմից իրականացրած աուդիտի ընթացակարգերը ներառել են՝

- համադրել համաձայնեցված ընթացակարգերի շրջանակներում ԹԾԾ-երի փաստացի մակարդակի վավարեկանության/թույլատրելիության մասին հաշվետվությունը ՀՀ կառավարության կողմից կատարված վճարումների հետ,
- ստուգել գումարների բացթողնման հայտերը որևէ անհամապատասխանության առումով:

Մեր կողմից իրականացրած աուդիտի ընթացակարգերի արդյունքում, մենք եզրակացրեցիք, որ Համաշխարհային Բանկն ընդունել է Ցուցանիշների վրա հիմնված հատկացումների (ՑՀՀ) կատարումը որպես վկայություն և հաստատել է 500,000 ԱՄՆ դոլարի ընդհանուր գումարի վճարումը, ինչպես սահմանված է Վարկային համաձայնագրի ժամանակացույցով և վավերացրել է 500,000 ԱՄՆ դոլարի վճարումը՝ հիմք ընդունելով բացթողնման հայտը: Որևէ անհամապատասխանություն չի արձանագրվել:

- Գնումներ

Ծրագրի շրջանակներում նպատակներն իրականացնելիս՝ կատարվել է 685,372 ԱՄՆ դոլարի գնումներ խորհրդատվական ծառայություններ, աշխատանքներ և ապրանքներ ձեռք բերելու համար: Գնումները պետք է իրականացվեն գնումների համար սահմանված ՀԲ-ի կիրառելի ուղեցույցների համաձայն:

Ի թիվս այլնի՝ այս ոլորտում մեր կողմից իրականացրած աուդիտի ընթացակարգերը ներառել են՝

- ղեկավարության հետ հաստատել գնման գործընթացը և ՀԲ-ի գնումների կիրառելի ուղեցույցի հետ համապատասխան,
- վերլուծել գնումների պլանը, յուրաքանչյուր գնման պայմանները, ՀԲ-ի հետ ունեցած նամակագրությունը, գնումների մեթոդը և դիտարկել այս պայմանների համապատասխանությունը ՀԲ-ի գնումների կիրառելի ուղեցույցի հետ,
- ընտրանքային հիմունքով, ստուգել գնումների փաթեթների համապատասխանությունը ՀԲ-ի գնումների կիրառելի ուղեցույցի հետ,
- ընտրանքային հիմունքով, ստուգել գնումները հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գնումների պայմանագրերում ամրագրված ներկայացման ենթակա վերջնական հաշվետվությունների առկայությունը:

Մեր կողմից իրականացրած աուդիտի ընթացակարգերի արդյունքում, մենք եզրակացրել ենք, որ գնումներն իրականացվել են ՀԲ-ի կողմից սահմանված գնումների կիրառելի ուղեցույցների համաձայն:

- Իրականացնող գործակալությունների կողմից կրած ծախսեր

Ծրագրի շրջանակներում նպատակներն իրականացնելիս՝ իրականացնող գործակալություններին տրամադրվել է 2,223,522 ԱՄՆ դոլարի դրամաշնորհներ: Իրականացնող գործակալությունները պետք է դրամաշնորհային միջոցներից ծախսերը կատարեն դրամաշնորհի պայմանագրի համաձայն:

Ի թիվս այլնի՝ այս ոլորտում մեր կողմից իրականացրած աուդիտի ընթացակարգերը ներառել են՝

- ղեկավարության հետ հաստատել դրամաշնորհային միջոցների տրամադրման գործընթացը և կատարված ծախսերի թույլատրելիության հետ կապված գործող ներքին հսկողական մեխանիզմները,
- ընտրանքային հիմունքով, ստուգել կատարված ծախսերը դրամաշնորհի պայմանագրով հաստատված նախահաշվի հետ,
- ընտրանքային հիմունքով, ստուգել իրականացնող գործակալությունների կողմից կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը:

Մեր կողմից իրականացրած աուդիտի ընթացակարգերի արդյունքում, մենք եզրակացրել ենք, որ դրամաշնորհի շրջանակներում կատարված ծախսերը դրամաշնորհի պայմանագրերի համաձայն թույլատրելի են:

*Այլ հարցեր – «Հայաստանի Պետական Հեղափոխությունների Ֆոնդ»-ին վճարման ենթակա դրամաշնորհային միջոցներ*

«Հայաստանի Պետական Հեղափոխությունների Ֆոնդ»-ը (ԱՆԻՖ) ԱԽՈԵ Ծրագրի շրջանակներում գործում է որպես իրականացնող գործակալություն: ԱՆԻՖ-ի կողմից կատարված ծախսերը ներկայացված են ֆինանսական հաշվետվությունների Ծանոթագրություն 7(բ)-ում: ՖՀՄՍ-ների համաձայն պատրաստված 2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ԱՆԻՖ-ի աուդիտ ենթարկված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Ծրագրի շրջանակներում ԱՆԻՖ-ի կողմից ստացման ենթակա դրամաշնորհի գումարը, որը չի համապատասխանում Ծրագրի շրջանակներում վճարման ենթակա դրամաշնորհի գումարին, եթե հաշվարկվում է կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը:

Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն, կազմակերպությունը ճանաչում է հողվածները որպես ակտիվներ, պարտավորություններ, սեփական կապիտալ, եկամուտ և ծախս (ֆինանսական հաշվետվության տարրեր), երբ դրանք բավարարում են ֆինանսական Հաշվետվողականության Հայեցակարգային Հիմունքների տարրերի սահմանումներին և ճանաչման չափանիշներին:

*Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 2(ա)-ում, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի ներդրման համար, որը ղեկավարության կարծիքով անհրաժեշտ է հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ նրանից դրանք առաջացել են կեղծիքի, թե սխալի հետևանքով:

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ծրագրի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի ՀՀ Վարչապետի Աշխատակազմը լուծարելու կամ Ծրագրի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*


Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Հարգանքով,



Հովհաննես Պետրոսյան  
Տնօրեն



Լիլիթ Մինասյան  
Աուդիտորական ծառայությունների  
ղեկավար

«Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ  
28 հունիսի 2021թ.

Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր  
2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար

	Փաստացի			Պլանավորված			Տարբերություն			Ծրագրի գնահատման փաստաթուղթ Ծրագրի տևողությունը
	2020	2019	Կուտակային	2020	2019	Կուտակային	2020	2019	Կուտակային	
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ «Կառավարության համաֆինանսավորման հաշիվ Վարկի համար Հատուկ հաշիվ ՀԲ ֆինանսավորման համար	-	-	-	-	-	-	-	-	-	
<b>Ընդհանուր</b>	<b>2,482,382</b>	<b>321,371</b>								
Ավելացումներ՝ Ֆինանսավորման աղբյուրներ «Կառավարության համաֆինանսավորում ՀԲ ֆինանսավորում	835,987 1,338,389	16,994 3,910,525	917,934 13,373,914							
<b>Ընդհանուր դոնոր միջոցներ</b>	<b>2,174,376</b>	<b>3,927,519</b>	<b>14,291,848</b>							
Արտարժույթի փոխանակման փոխարժեքի տարբերություն  «Կառավարության համաֆինանսավորում	(4,904)	(14)	(4,730)							
<b>Ընդհանուր</b>	<b>(4,904)</b>	<b>(14)</b>	<b>(4,730)</b>							
Հանած՝ Հատկացված միջոցների օգտագործում										

Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր  
2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար

	Փաստացի			Պլանավորված			Տարբերություն			Ծրագրի զնահատման և փաստաթուղթ Ծրագրի տևողություն ը
	2020	2019	Կուտակային ն	2020	2019	Կուտակային	2020	2019	Կուտակային	
(1) Թույլատրելի Ծախսումների Ծրագրի համար կատարված վճարումներ Նախագծի Մաս Ա-ի շրջանակում Կառավարության համաֆինանսավորմամբ	-	-	-							
Վարկի ֆինանսավորմամբ	500,000	1,700,000	9,700,000							
(2) Ապրանքների, աշխատանքների, ոչ խորհրդատվական ծառայությունների և խորհրդատվական ծառայությունների (այդ թվում՝ առդիտորական ծառայությունների), վերապատրաստումների և լրացուցիչ գործառնական ծախսերի ձեռքբերում Նախագծի Բ.1 , Գ և Դ Մասերի շրջանակում Կառավարության համաֆինանսավորմամբ	572,100	16,980	654,221							
Վարկի ֆինանսավորմամբ	1,537,961	49,514	1,766,104							
(3) Դրամաշնորհներ Նախագծի Բ.2 մասի շրջանակում Կառավարության համաֆինանսավորմամբ	40,316	-	40,316							



Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր  
2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար	Փաստացի			Պլանավորված			Տարբերություն			Ծրագրի գնահատման փաստաթուղթ Ծրագրի տևողություն Ը
	2020	2019	Կուտակային	2020	2019	Կուտակային	2020	2019	Կուտակային	
Վարկի ֆինանսավորմամբ (4) Պետություն-Մասնավոր Գործընկերության Նախաձեռնությունների Ֆինանսավորում Նախագծի Մաս Բ.3-ի շրջանակներում Կառավարության համաֆինանսավորմամբ	106,901	-	106,901							
Վարկի ֆինանսավորմամբ (5) Վարկի դիմաց կատարված վճարում ՀԲ (6) Ապրանքներ, աշխատանքներ, խորհրդատվական ծառայություններ, ոչ խորհրդատվական ծառայություններ Ազգային վենչուրային հիմնադրամի ներդրումների և Ազգային վենչուրային հիմնադրամի ենթաբաղադրիչների համար Մաս Բ.4-ի շրջանակներում (Վարկի ֆինանսավորմամբ) Կառավարության կողմից համաֆինանսավորում Ֆինանսավորում վարկի միջոցներով	491,167	-	491,167							
	-	-	125,000							
Ընդհանուր	831,083	16,980	913,204	2,277,722	429,765	2,359,843	(1,446,639)	(412,785)	(1,446,639)	7,292,497
	2,636,029	1,749,514	12,189,172	10,385,843	8,949,208	19,938,986	(7,749,814)	(7,199,694)	(7,749,814)	48,000,000
Ընդհանուր	3,467,112	1,766,494	13,102,376	12,663,565	9,378,973	22,298,829	(9,196,453)	(7,612,479)	(9,196,453)	55,292,497


Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր  
2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար

	Փաստացի			Պլանավորված			Տարբերություն			Ծրագրի գնահատման փաստաթուղթ Ծրագրի տևողություն
	2020	2019	Կուտակային	2020	2019	Կուտակային	2020	2019	Կուտակային	
Դրամական միջոցների վերջնական մնացորդ										
Կառավարության կողմից համաֆինանսավորում										
Վարկի համար										
Հատուկ հաշիվ Վարկի համար (ՀԲ ֆինանսավորում)	1,184,742	2,482,382								
<b>Ընդհանուր</b>	<b>1,184,742</b>	<b>2,482,382</b>								

Ծրագրի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի ղեկավարության կողմից և ստորագրվել են ղեկավարության անունից 2021 թվականի հունիսի 28-ին:

Բագրատ Բադալյան  
Փոխվարչապետ Տիգրան Ավինյանի  
գրասենյակի ղեկավար



Սուսաննա Սահադյան *C. Badalyan*  
Վարչապետի աշխատակազմի Ֆինանսական և հաշվապահական  
հաշվառման վարչության պետ

Գեորգի Խաչատրյան  
ԱԽՈԵ Ծրագրի Կառավարիչ

Անահիտ Կարապետյան *Gevorg Khachatryan*  
ԱԽՈԵ Ծրագրի ֆինանսական գծով ղեկավար

Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Միջոցների օգտագործման մասին հաշվետվությունն ըստ Ծրագրի գործունեության տեսակների

	Փաստացի			Պլանավորված			Տարբերություն			ԾԳՓ Ծրագրի տևողություն
	2020	2019	Կուտակայի ն	2020	2019	Կուտակային	2020	2019	Կուտակայի ն	
<b>Ծրագրի գործունեության տեսակները</b>										
<i>Մաս Ա.Առևտրի խթանման և որակի համակարգի արդյունավետության բարելավում</i>	500,000	1,700,000	9,700,000	-	-	-	-	-	-	10,000,000
Կառավարության համաֆինանսավորմամբ	-	-	-	-	-	-	-	-	-	-
Վարկի ֆինանսավորմամբ	500,000	1,700,000	9,700,000	-	-	-	-	-	-	10,000,000
<i>Մաս Բ.Ներդրումների և արտահանման խթանում</i>	2,223,522	-	2,223,522	-	-	-	-	-	-	41,449,166
Կառավարության համաֆինանսավորմամբ	657,170	-	657,170	-	-	-	-	-	-	6,535,296
Վարկի ֆինանսավորմամբ	1,566,352	-	1,566,352	-	-	-	-	-	-	34,913,870
<i>Մաս Գ: Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում</i>	436,859	-	457,237	-	-	-	-	-	-	2,458,022
Կառավարության համաֆինանսավորմամբ	96,762	-	105,860	-	-	-	-	-	-	458,022
Վարկի ֆինանսավորմամբ	340,097	-	351,377	-	-	-	-	-	-	2,000,000
<i>Մաս Դ.Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում</i>	306,731	66,494	721,617	-	-	-	-	-	-	1,385,309
Կառավարության համաֆինանսավորմամբ	77,151	16,980	150,174	-	-	-	-	-	-	299,179
Վարկի ֆինանսավորմամբ	229,580	49,514	446,443	-	-	-	-	-	-	961,130
Վարկի դիմաց կատարված վճարում ՀԲ	-	-	125,000	-	-	-	-	-	-	125,000
<b>Ընդհանուր ծրագրի ծախսեր</b>	<b>3,467,112</b>	<b>1,766,494</b>	<b>13,102,376</b>	<b>12,663,565</b>	<b>9,378,973</b>	<b>22,298,829</b>	<b>(9,196,453)</b>	<b>(7,612,479)</b>	<b>(9,196,453)</b>	<b>55,292,497</b>

## 1 Նախապատմություն

### (ա) Կազմակերպությունը և կազմակերպության կողմից իրականացվող գործունեությունը

Ծրագիրը սկզբնապես իրականացվել է «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի կողմից սկսած 2014 թվականի օգոստոսի 6-ից: Հետագայում 2018 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՀ կառավարության N 1427-Ն որոշման համաձայն՝ «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ի կողմից իրականացվող գործունեությունը փոխանցվել է ՀՀ ֆինանսների նախարարության Ծրագրերի իրականացման վարչության կառուցվածքային մասնագիտական ստորաբաժանմանը: Այդուհանդերձ, 2020 թվականի հունվարի 1-ից ծրագրի ղեկավարությունը կրկին փոխվել է, և ներկայումս ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Վարչապետի Աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) կողմից:

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2014 թվականի օգոստոսի 6-ին կնքված ֆինանսավորման համաձայնագրի համաձայն (Վարկային համաձայնագիր), 50,000,000 ԱՄՆ դոլար համարժեք գումարի վարկ է հատկացվել Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի իրականացմանը՝ ապրանքների ձեռքբերումը, ինչպես նաև խորհրդատուների կողմից մատուցված ծառայությունները և առաջացող գործառնական ծախսումները ֆինանսավորելու համար: Համաձայն Վարկային Համաձայնագրի Երրորդ Փոփոխության կնքված 2020 թվականի Հոկտեմբերի 29-ին վարկի սկզբնական գումարը նվազեցվել է 2,000,000 ԱՄՆ դոլարով դառնալով 48,000,000 ԱՄՆ դոլար:

Ձեռքբերված ապրանքների, խորհրդատուների կողմից մատուցված ծառայությունների և գործառնական ծախսերից առաջացող հարկային հետևանքները վճարվում են ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորվող միջոցների հաշվին: ՀՀ կառավարության համաֆինանսավորման ընդհանուր գումարը կազմում է 7,300,000 ԱՄՆ դոլար:

Ծրագրի նպատակն է հզորացնել Փոխառուի հնարավորությունները խթանելու արտահանումը, ներդրումների գրավումը և ընկերություններին տրամադրել որակի կառավարման ծառայություններ:

Ծրագիրը բաղկացած է հետյալ մասերից՝

- *Մաս Ա. Առևտրի խթանման և որակի համակարգի արդյունավետության բարելավում*  
Սույն Բաղադրիչի նպատակն է նպաստել առևտրի խթանմանը և որակի համակարգի բարելավմանն ուղղված բարեփոխումներին.
- *Մաս Բ. Ներդրումների և արտահանման խթանում*  
Սույն Բաղադրիչի նպատակն է հզորացնել տեղական արտահանողների հնարավորությունները արտասահմանյան շուկաներում մրցունակ լինելու

նպատակով, նպաստել բիզնես խմբերի զարգացմանը և գրավելու արտասահմանյան ուղղակի ներդրումներ.

- *Մաս Գ. Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում*  
Սույն Բաղադրիչի նպատակն է արդիականացնել չափագիտական, ակրեդիտացման և ստանդարտացման ծառայությունները՝ տնտեսությանը որակի հավաստիացման համապատասխան ծառայություններ տրամադրելու նպատակով.
- *Մաս Դ. Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում*  
Սույն Բաղադրիչի նպատակն է ֆինանսավորել ծրագրի իրականացումը և մոնիթորինգը:

Համաձայն 2020 թվականի հունվարի 10-ին կնքված Վարկային Համաձայնագրի Փոփոխության Մաս Բ. Ներդրումների և արտահանման խթանում բաղադրիչը հիմնականում իրականացվում է «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ»-ի (այսուհետ՝ ԱՆԻՖ), «Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամ»-ի (այսուհետ՝ ՁԻՀ) և «Ներդրումների Աջակցման Կենտրոն»-ի (այսուհետ՝ ՆԱԿ) կողմից: ԱՆԻՖ-ը պատասխանատու է 2.1 (ներդրումների և արտահանման խթանման աջակցման ծառայություններ) ենթաբաղադրիչի համար: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը պատասխանատու է ՁԻՀ-ի միջոցով 2.2.2 (Նորարարական համաֆինանսավորվող դրամաշնորհներ) և 2.3 (Պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում գործունեություններ) ենթաբաղադրիչների, ինչպես նաև 2.4 (Ազգային վենչուրային հիմնադրամ) ենթաբաղադրիչի համար:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ՆԱԿ-ի միջոցով պատասխանատու է 2.2.1 (Արտահանողների Ջարգացման Դրամաշնորհների Ծրագիր) ենթաբաղադրիչի համար: Իրականացնող մարմինների կողմից կատարված ծախսերը ներկայացված են ծանոթագրություն 7-ում:

Ծրագրի վերջնաժամկետը 2022 թվականի մայիսի 31-ն է:

#### **(բ) Արդյունքների վրա հիմնված ֆինանսավորում**

Ծրագրի Մաս Ա «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի արդյունավետության բարելավում» բաղադրիչի շրջանակներում, ՀԲ-ն կատարում է Արդյունքների վրա հիմնված ֆինանսավորում, որի մասով այն ենթակա է անկախ աուդիտորի կողմից աուդիտի

Արդյունքների վրա հիմնված ֆինանսավորման համաձայն՝ ՀԲ-ն ՀՀ կառավարությանը տրամադրում է լրացուցիչ վարկային միջոցներ համաձայնեցված գործողություններն իրականացնելու, արդյունք ապահովելու դեպքում (*Ցուցանիշների վրա հիմնված հատկացումներ* կամ ՑՀՀ), որը հանգեցնում է առևտրի խթանման և որակի համակարգի բարելավմանը: ՀՀ կառավարությունը հատկացումները ստանում է իրականացված յուրաքանչյուր ՑՀՀ-ին բաշխված գումարների հիման վրա այնքանով, որքանով դրանք բավարարում են Կառավարության կողմից կատարած *Թույլատրելի ծախսերի ծրագրերը* կամ ԹԾԾ-երը:

Ծրագրերի իրականացման գրասենյակը հաշվետվություն է ներկայացնում ՑՀՀ-ի իրականացման վերաբերյալ՝ տրամադրելով կոնկրետ իրականացրած ՑՀՀ-ի և ԹԾԾ-ի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը:

## 2 Պատրաստման հիմունքներ

### (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն՝ հիմնվելով Ֆինանսական հաշվետվողականությունն ըստ հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդի Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ) վրա:

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները բաղկացած են հետևյալ հաշվետվություններից՝

- Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն,
- Միջոցների օգտագործման մասին հաշվետվություն ըստ Ծրագրի գործունեության տեսակների,
- Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն,
- Հատուկ հաշվի հաշվետվություն,
- Ծրագրի հաշվի հաշվետվություն:

Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի համաձայն գործառնությունները և դեպքերը ճանաչվում են դրամական միջոցների ստացման կամ դրամական միջոցներով վճարման պահին:

### (բ) Հաշվետվության արժույթ

Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների հաշվետվության արժույթը ԱՄՆ դոլարն է: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ԱՄՆ դոլարով՝ 1 ԱՄՆ դոլարի ճշտությամբ:

## 3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

### (ա) Արտարժույթով գործարքներ

Սկսած 2020 թվականի հունվարի 1-ից Ծրագրի շրջանակներում, ՎՋՄԲ-ն ծրագրի համար բացված 900000908302 հատուկ հաշվին ԱՄՆ դոլարով կատարում է փոխանցումներ: Ընդունելի և հաստատված ծախսերի (ապրանքներ, ծառայություններ և այլն) դիմաց վճարումները կատարվում են Աշխատակազմի կողմից հատուկ հաշվից, կամ Աշխատակազմը բացթողնման հայտ է ներկայացնում բանկին՝ կապալառուներին, մատակարարներին և խորհրդատուներին ուղղակիորեն վարկային հաշվից վճարելու համար: Ստացված գումարը Աշխատակազմը փոխարկում է ՀՀ դրամի և փոխանցում կապալառուներին, մատակարարներին և խորհրդատուներին:

Ծրագրի մնացած մնացորդը վերահաշվարկվում է ԱՄՆ դոլարով՝ հիմնվելով 2020 թվականի դեկտեմբերի 31-ի ՀՀ Կենտրոնական բանկի կոմից սահմանած ԱՄՆ դոլարի փոխանակման փոխարժեքի վրա՝ 1 ԱՄՆ դոլարն ընդունելով 522,59 ՀՀ դրամ:

**(բ) Հարկեր**

Կիրառվող բոլոր հարկային պարտավորությունները հաշվարկվել և վճարվել են ՀՀ հարկային կանոնակարգերին համապատասխան:

**(գ) Ծրագրի միջոցները**

Ծրագրի միջոցները ստացվում են ՎՋՄԲ-ից և ՀՀ կառավարությունից:

#### 4 Վճարումների դիմումների համադրում

				2020
Վճարման դիմումի հղում	Դիմումի տեսակ	ՎԱ-ի կողմից պահանջված գումար ԱՄՆ դոլար	Համաշխարհային Բանկի կողմից վճարված գումար ԱՄՆ դոլար	Տարբերություն ԱՄՆ դոլար
	Փոխհատուցում/ Արդյունքների վրա հիմնված Ֆինանսավորում			
EEP-DA 7		500,000	500,000	-
		<u>500,000</u>	<u>500,000</u>	<u>-</u>
				2019
Վճարման դիմումի հղում	Դիմումի տեսակ	ՎԱ-ի կողմից պահանջված գումար ԱՄՆ դոլար	Համաշխարհային Բանկի կողմից վճարված գումար ԱՄՆ դոլար	Տարբերություն ԱՄՆ դոլար
	Փոխհատուցում/ Արդյունքների վրա հիմնված Ֆինանսավորում			
EEP-DA 6		1,700,000	1,700,000	-
		<u>1,700,000</u>	<u>1,700,000</u>	<u>-</u>



## 5 Հատուկ հաշվի և ՀՀ Կառավարության համաֆինանսավորման հաշվի հաշվետվություն

<i>ԱՄՆ դոլար</i>	2020	2019
Սկզբնական մնացորդ Ավելացումներ՝	2,482,382	321,371
Ընթացիկ ժամանակաշրջանում ՀԲ-ից ստացված կանխավճար/համալրում	838,389	2,210,525
Հատուկ հաշվին կատարված կանխավճարի ներկա չմարված գումար	<u>3,320,771</u>	<u>2,531,896</u>
Վերջնական մնացորդը տեղափոխված հաջորդ ժամանակաշրջան	1,184,742	2,482,382
Ավելացում՝ ընթացիկ ժամանակաշրջանում կատարված թույլատրելի ծախսեր	2,136,029	49,514
Ընդհանուր հաշվարկված կանխավճար	<u>3,320,771</u>	<u>2,531,896</u>

<i>ԱՄՆ դոլար</i>	2020	2019
Սկզբնական մնացորդ Ավելացումներ՝	-	-
Ընթացիկ ժամանակաշրջանում ՀՀ կառավարության կողմից կատարված համաֆինանսավորում	835,987	16,994
Հանած՝ փոխանակման փոխարժեքի տարբերությունը	(4,904)	(14)
Ծրագրի հաշվին կատարված կանխավճարի ներկա չմարված գումար	<u>831,083</u>	<u>16,980</u>
Վերջնական մնացորդը տեղափոխված հաջորդ ժամանակաշրջան	-	-
Ավելացում՝ ընթացիկ ժամանակաշրջանում կատարված թույլատրելի ծախսեր	831,083	16,980
Ընդհանուր հաշվարկված կանխավճար	<u>831,083</u>	<u>16,980</u>

## 6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար	2020	2019
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>		
<b>Ընթացիկ ակտիվներ</b>		
<i>Դրամական միջոցներ և դրամական միջոցների համարժեքներ</i>		
ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշիվ վարկի համար	-	-
Հատուկ հաշիվ վարկի համար (ՀԲ ֆինանսավորում)	1,184,742	2,482,382
<b>Ընդհանուր ընթացիկ ակտիվներ</b>	<b>1,184,742</b>	<b>2,482,382</b>
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>		
<i>Ծրագրի կուտակային ծախսեր</i>		
ՀՀ կառավարության համաֆինանսավորման կուտակային ծախսեր	913,204	82,121
Վարկային միջոցներից ֆինանսավորման կուտակային ծախսեր	12,189,172	9,553,143
<b>Ընդհանուր ոչ ընթացիկ ակտիվներ</b>	<b>13,102,376</b>	<b>9,635,264</b>
<b>Ընդհանուր ակտիվներ</b>	<b>14,287,118</b>	<b>12,117,646</b>
<b>ՄԻՋՈՑՆԵՐ</b>		
<i>Ծրագրի ֆինանսավորում</i>		
ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշիվ վարկի համար	917,934	81,947
Հատուկ հաշիվ վարկի համար (ՀԲ ֆինանսավորում)	13,373,914	12,035,525
<b>Ընդհանուր միջոցներ</b>	<b>14,291,848</b>	<b>12,117,472</b>
<b>Արտարժույթի փոխանակման փոխարժեքի տարբերություն</b>		
ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշիվ վարկի համար	(4,730)	174
Հատուկ հաշիվ վարկի համար (ՀԲ ֆինանսավորում)	-	-
<b>Ընդհանուր արտարժույթի փոխանակման փոխարժեքի տարբերություն</b>	<b>(4,730)</b>	<b>174</b>
<b>Ընդհանուր զուտ ակտիվներ և պարտավորություններ</b>	<b>14,287,118</b>	<b>12,117,646</b>

## 7 Ծախսեր՝ Իրականացնող գործակալությունների կողմից

### (ա) Ուղղակի վճարումներ

Մաս Բ. Ներդրումների և արտահանման խթանում շրջանակում ԱԽՈԵ ծրագրի կառավարման մարմինը ուղղակիորեն մատակարարներին վճարել է 223,987 ԱՄՆ դոլար:

### (բ) Ծախսեր իրականացված ԱՆԻՖ-ի կողմից

ԱՄՆ դոլար	Փաստացի	Պլանավորված	Տարբերություն
Գործառնական ծախսեր	510,325	912,158	(401,833)
Աշխատավարձեր	464,204	714,304	(250,100)
SS սարքավորումներ, տեղեկատվական անվտանգություն	28,290	42,484	(14,194)
Գրասենյակի վարձակալություն, կոմունալ վճարումներ, հեռահաղորդակցություն, գրենական պիտույքներ	14,948	73,643	(58,695)
Իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական ծառայություններ	2,255	3,778	(1,523)
Այլ գործառնական ծախսեր	628	77,949	(77,321)
<b>Ներկայացուցչություններ</b>	<b>565,981</b>	<b>1,234,933</b>	<b>(668,952)</b>
Աշխատավարձեր	513,864	1,059,061	(545,197)
Իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, գնումներ, ՄՌ-Կ ծառայություններ	32,782	70,520	(37,738)
Գրասենյակի վարձավճարներ, կոմունալ վճարներ, հեռահաղորդակցություն, գրասենյակային ծառայություններ և նյութեր, այլ սպառողական ապրանքներ	9,727	38,686	(28,959)
SS սարքավորումներ, տեղեկատվական անվտանգություն, կայք, հոսթինգի ծառայություններ և նյութեր, այլ սպառողական ապրանքներ	6,752	25,740	(18,988)
Այլ գործառնական ծախսեր	2,856	40,926	(38,070)
<b>Ընդհանուր</b>	<b>1,076,306</b>	<b>2,147,091</b>	<b>(1,070,785)</b>

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխավճարի մնացորդը կազմում է 192,637 ԱՄՆ դոլար:

### (գ) Ծախսեր իրականացված ՆԱԿ-ի կողմից

ԱՄՆ դոլար	Փաստացի	Պլանավորված	Տարբերություն
Աշխատակազմի վարձատրություն	24,593	33,824	(9,231)
Գործուղման ծախսեր	1,837	4,912	(3,075)
Ծառայություններ	2,076	15,405	(13,329)
Գրասենյակի սպասարկման ծախսերը	4,763	7,254	(2,491)
<b>Ընդհանուր</b>	<b>33,269</b>	<b>61,395</b>	<b>(28,126)</b>

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխավճարի մնացորդը կազմում է 4,969 ԱՄՆ դոլար:

**(դ) Ծախսեր իրականացված ՁԻՀ-ի կողմից**

<i>ԱՄՆ դոլար</i>	<u>Փաստացի</u>	<u>Պլանավորված</u>	<u>Տարբերություն</u>
<i>Ինժեներական քաղաքի գործառնական ծախսերը</i>	207,439	949,543	(742,104)
Աշխատավարձ	153,836	521,170	(367,334)
Հիմնական միջոցների ձեռքբերում	7,429	6,548	881
Վարձավճար	-	35,260	(35,260)
Մասնագիտական ծառայություններ	-	5,038	(5,038)
Այլ	46,174	381,527	(335,353)
<i>Նորարարական համաֆինանսավորվող դրամաշնորհների գծով գործառնական ծախսեր</i>	52,389	243,691	(191,302)
Աշխատավարձ	30,012	133,755	(103,743)
Հիմնական միջոցների ձեռքբերում	5,671	1,511	4,160
Մասնագիտական ծառայություններ	-	15,112	(15,112)
Այլ	16,706	93,313	(76,607)
<i>Գերհաշվարկային կենտրոնի գործառնական ծախսերի ստեղծում</i>	16,033	374,146	(358,113)
Մասնագիտական ծառայություններ	7,968	5,038	2,930
Աշխատավարձ	6,759	205,359	(198,600)
Հիմնական միջոցների ձեռքբերում	-	10,074	(10,074)
Վարձավճար	-	3,023	(3,023)
Այլ	1,306	150,652	(149,346)
<i>Կիրերանվտանգության լաբորատորիայի ստեղծում</i>	193,712	922,576	(728,864)
Աշխատավարձ	152,605	506,376	(353,771)
Մասնագիտական ծառայություններ	7,968	5,038	2,930
Հիմնական միջոցների ձեռքբերում	3,105	22,667	(19,562)
Վարձավճար	-	35,260	(35,260)
Այլ	30,034	353,235	(323,201)
<b>Ընդհանուր</b>	<b>469,573</b>	<b>2,489,956</b>	<b>(2,020,383)</b>

Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագիր  
2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Հատուկ նպատակի ֆինանսական  
հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխավճարի մնացորդը կազմում է 222,781 ԱՄՆ դոլար:

ՁիՀ-ը կատարել է նաև ծրագրի գործառնական ծախսեր, որոնք ներառվել են Մաս Դ. Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում բաղադրիչում:

ԱՄՆ դոլար	Փաստացի	Պլանավորված	Տարբերություն ն
Աշխատավարձ	52,163	82,122	(29,959)
Մասնագիտական ծառայություններ	15,935	5,038	10,897
Վարձավճար	12,204	18,385	(6,181)
Այլ	16,426	43,998	(27,572)
<b>Ընդհանուր</b>	<b>96,728</b>	<b>149,543</b>	<b>(52,815)</b>

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխավճարի մնացորդը կազմում է 13,380 ԱՄՆ դոլար: